Հայաստանի ազգայնականներն ու հարաբերություններն հարևան երկրների հետ

Վերջին շրջանում ակտիվացել են հայ ազգայնականները, ինչը ինքնապաշտպանության և Հայաստանի փրկության հույս է ներշնչում: Ընդհանրապես, հայ ազգայնականները, ունենալով նույն նպատակը, ունեն տարբեր դիրքորոշումներ, օրինակ՝ այլ երկրների հետ հարաբերությունների առումով:

Կան ազգայնականներ, որոնք ռուսամետ են կամ ամերիկամետ, և կան ազգայնականներ, որոնք ունեն չեզոք դիրքորոշում երկու բևեռների միջև: Ռուսամետ կարելի է համարել ՀՅԴ-ին, որը կողմ է ունենալ լավ հարաբերություններ ռուսական իշխանության հետ, բայց միևնույն ժամանակ ունի տարբեր կապեր ԱՄՆ-ում:

Կամ ,օրինակ, Սասնա ծռերը, որոնք ծայրահեղականորեն դեմ են ռուսական ազդեցությանը և ամերիկամետ են: Սակայն ինչո՞ւ են հայ ազգայնականները բաժանված տարբեր խմբերի: Պատասխանը պարզ է՝ պետք է ուղղակի ուսումնասիրել պատմությունը: Բերենք օրինակ ամերիկամետ հայ ազգայնականներին: Նրանք ԱՄՆ-ին համարում են լավ գործընկեր, քանզի հենց 1920-ին Սեւրի պայմանագրով ԱՄՆ-ի իշխանությունը առաջարկեց հանձնել Արևմտյան Հայաստանը ՀՀ-ին:

Կամ այն, որ 1920-ականներին ԱՄՆ-ի սենատում մի քանի սենատորներ առաջարկեցին հայերենը, որպես միջազգային լեզու, սակայն ԽՍՀՄ-ի իշխանությունը այդ առաջարկին դեմ գնաց: Իսկ ինչո՞ւ են որոշ հայ ազգայնականներ կողմ Ռուսաստանի հետ համագործությանը: Սա արդեն ավելի հեշտ է բացատրել: Ինչպես գիտենք, հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի, շատերը միասին ընտանիքներ են կազմել, միասին կառուցել են տներ, գործարաններ և այլն: Բացի այդ, հայերն ու ռուսները կրոնական ու արժեհամակարգային ընդհանրություն ունեն:

- Բայց ամենակարեւորն այն է, որ հայ ազգայնականները մի քանի հարցի շուրջ միեւնույն տեսակետն ունեն. առաջինը՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների մասով, որ այդ երկրների հետ այս կարգավիճակով պետք չէ գնալ բարեկամության, և երկրորդը՝ դիմել ինքնապաշտպանության և փրկել Արցախը, թե դիվանագիտորեն, թե ռազմական ներուժով: Նաև, ըստ ազգայնականների, վերջին պատերազմի արդյունքում Հայաստանը և Ադրբեջանը ուղղակի հավասարեցրեցին միավորները, և շուտով գալու է որոշիչ հանդիպումը, որին հայ ազգը պետք է պատրաստվի և դիմի ինքնապաշտպանության, մի խոսքով՝ ազգ, բանակ, հաղթանակ:

Մի քիչ պատմություն

- 1985թ. հետո գորբաչովյան քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը հնարավորություն տվեց հանդես գալու իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելու և ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու:Միաժամանակ Ստեփանակերտում և մարզի մյուս շրջկենտրոններում սկսեցին բազմամարդ հանրահավաքներ կազմակերպվել:Հանրահավաքներ էին կազմակերպվում նաև՝ Երևանում և Հայաստանի մյուս շրջաններում.կարգախոսը <<Միացումն էր >>,որը նշանակում էր Ղարաբաղի միացումը Հայաստանին և դեռ մինչ այսօր այդ միացումը լաիարժեք չի ստացվել:

- Թեպետ մեզ 30 տարի թվացել է ,թե Ղարաբաղը միացել է Հայաստանին ,Արցախը մերն է և Հայաստանի անբաժան մասը:Սակայն 44 օրյա պատերազմը ցույց տվեց ,որ դա միֆ է:Իզուր չէ,որ պատմաբան Լեոն Արցախը համեմատել է «հսկայական միջնաբերդի» հետ, առանց որի «անհնար է երևակայել Հայաստանը»: Կրեմլը արցախյան հիմնախնդիրը խորացնելով դարձրեց «անլուծելի»:

- Արցախահայության շարժմանը կանգնելու համար 1988թ. փետրվարի 21-ից Հայաստանում զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց:1988թ. փետրվարի 22-ին Աղդամի շրջանից, իրենց ճանապարհին ամեն ինչ ավերելով, ադրբեջանական բազմահազարանոց զորքը շարժվեց Ստեփանակերտ՝ «կարգուկանոն հաստատելու», բայց Ասկերանի արվարձաններում կանգնեցվեցին և հետ շպրտվեցին: Նրանց հաջորդ քայլը եղավ հայերի ցեղասպանությունը Սումգայիթում ,որը սկիզբ դրեց Ադրբեջանի հայության բռնագաղթի առաջին փուլին:

- 1988թ. փետրվարի 27-29-ը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում կազմակերպվեց տեղի հայ ազգաբնակչության ջարդ, որի ընթացքում՝ տանջամահ արվեցին 27 հայեր, խոշտանգվեցին ու ծանր վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ: 1989թ հուլիսի 21-ից սկսած՝ Ադրբեջանի կողմից Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը ենթարկվեցին տնտեսական շրջափակման:

- Արցախի հարցը ներկայումս ամենաբարդ խնդիրն է ,ներկա պահին Հայաստան- Արցախ կապող միակ օղակը՝ Լաչինի միջանցքն է ,որը լիակատար վերահսկվումէ ռուս խաղաղպահների կողմից:Հայ ժողովուրդը պետք է իր բոլոր ուժերը ներդնեն Արցախի անվտանգության ,Արցախահայության բարեկեցիկ կյանքի,ամուր սահմանների ,և արժանապատիվ ապագայի համար:Միահամուռ ջանքերով պետք է ամեն գնով հետ բերենք կորցրած ամեն թիզ հողը: